ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի 125
Հեռ.՝ (0265)22255, էլ. փոստ՝ chambarak.gegharquniq@mta.gov.am

N 288
05 հունիս
2019թ.

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ
Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բունիաթյան.

Ճամբարակի համայնքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի մարտի 28-ին կնքված թիվ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2019 թվականի ապրիլի 27-ը պետք է իրականացներ Ճամբարակի համայնքապետարանի 1-ին չափաբաժնով Տ.Մեծ փողոցի ասֆալտապատման և մայթերի հիմնանորոգման ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման և 2-րդ չափաբաժնով՝ Գ.Նժդեհ-Նարեկացի փողոցների և մայթերի ասֆալտապատման ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման կատարման աշխատանքներ,ինչը պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարվել:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանգրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը լրացել է 27.04.2019 թվականին:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն է էականորեն խախտել պայմանագիրը:Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին: Գ.Նժդեհ-Նարեկացի փողոցների և մայթերի ասֆալտապատման ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը չեն ընդունվում պատվիրատուի կողմից արձանագրված ներքոհիշյալ թերությունների պատճառով:

1. ԱՊ-3 թերթիկում վերանորոգման առաջադրանքից դուրս է մնացել Գ.Նժդեհ փողոցը:

2. Նախագիծ-նախահաշվում խախտվել են փողոցների անունները:
3. ԱՊ-4 թերթիկում կան անհասկանալի պատկերներ:
4. Երթևեկելի մասի համար նախահաշվով նախատեսված է Ա տիպի ասֆալտբետոնե ծածկույթ,1տոննան 31859 արժեքով, Բ տիպի ասֆալտբետոնե ծածկույթի 1 տոննան 24000 դրամի փոխարեն:
5. Նախագիծ-նախահաշվային փաստաթղթերում բացակայում է փորձագիտական եզրակացությունը:
6. Նախագիծ-նախահաշվային փաստաթղթերում կան ծավալների տարբերություն նախահաշվի և նախագծի միջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները,հիմք ընդունելով «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ Ճամբարակի համայնքապետարանի 2019թվականի հունիսի 05-ին միակողմանի լուծում է «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման պայմանագիրը՝2-րդ չափաբաժնի մասով:

Տեղեկացնում եմ ,որ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում Ճամբարակի համայնքապետարանի գանձապետական 900182081357 հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 30 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Միաժամանակ հայտնում եմ,որ պայմանագրի ապահովումը վերը նշված հաշվեհամարին սահմանված ժամկետում չփոխանցելու դեպքում,համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի՝ համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարները գանձելու նպատակով:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ **Ռոբերտ Օհանյան**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Մարկոսյան
0265 2 30 08